

Նունը Շուրին է. ևս այս երիտասարդի բարեկամն եմ (նա ցոյց տուեց Բերսենելին): Դուք պարուն ինսարօվն էք, այնպէս չք,
— Ես ինսարօվն եմ:

— Ուրեմն տուէք ձեր ձեռքը և ծանօթանանք: Չը զիտեմ,
արդեօք Բերսենելին խօսել է իմ մասին, բայց ինձ նա շատ բան
է ասել ձեր մասին: Դուք այստեղ բնակութիւն հաստատեցիք:
Շատ լաւ: Մի բարկանափ ինձ վրայ, որ ևս այսքան ուշադրու-
թեամբ եմ ձեղ նայում: Արհեստով ևս քանդակագործ եմ և նա-
խատենում եմ: որ շուտով կը խնդրեմ թոյլ տաք որ ձեր գլխի
արձանը պատրաստեմ:

— Իմ գլուխը պատրաստ է ձեղ ծառայելու, ասաց ինսա-
րօվը:

— Այսօր ինչ ենք անում մենք, հը, խօսեց Շուրինը, յան-
կարծ նստելով ցածրիկ աթոսի վրայ և երկու ձեռով յենուելով
միմեանցից հեռացրած ծնկների վրայ: — Անդրէյ Պետրովիչ, ձեր
ազնուութիւնը որեէ ծրագիր ունի այսօրուայ համար: Եղանակը
հիանալի է: չոր խոտերի և չոր մորենու հոտը այնպէս է փչում...
կարծես կուրծք կակզացնող չայ ևս խմում: Պէտք է մի որեէ
հնարք դանել: Ցոյց տանք Կունցօօի նոր բնակչին այստեղի
բաղմաթիւ գեղեցկութիւնները (բայց նա կարծես վշերի վրայ
մինի նստած, շարունակում էր ինքն իրան մտածել Բերսենելի):
Հը, ինչ ես լոել, իմ բարեկամ Հօրացիօ: Բաց արա քո պատ-
գամախոս շրթունքները: Մի հնարք կը գտնենք մենք թէ ոչ:

— Ես չը գիտեմ, նկատեց Բերսենելով: — ինչպէս ուզում է
ինսարօվը նա, կարծեմ, ուզում է աշխատել:

Շուրինը շուռ եկաւ աթոսի վրայ:

— Դուք ուզում էք աշխատել, հարցրեց նա քթի մէջ:

— Ոչ, պատասխանեց նա: — այսօրուայ օրը կարող եմ
նուիրել զբօսանքի:

— Ա՛, արտասանեց Շուրինը: — Շատ գեղեցիկ: Գնացէք,
իմ բարեկամ Անդրէյ Պետրովիչ, ծածկեցէք ձեր իմաստուն
գլուխը գլխարկով և զնանք, ուր մեր ազգերն են տեսնում: Մեր
աշքերը ջահէլ են — հեռուն են տեսնում: Ես գիտեմ մի ամենա-
վատ պանդոկ, ուր մեզ կը տան ամենանպէտք ճաշ, բայց մենք
շատ ուրախ կը լինենք: Գնանք:

Կէս ժամ անշամ՝ նրանք երկով գնում էին Մոսկուա գետի
եղերքով: Ինսարօվը մի բաւական օտարութի, ականջաւոր գտակ
ունէր, որը Շուրինին ոչ բոլորովին բնական մի հրճուանք էր
պատճառում, ինսարօվը քայլում էր չը շտապելով, նայում էր,
շնչում էր, խօսում և ժպտում հանդիստ կերպով: նա այդ օրը

Նուկրել էր զուարճութեան և կատարելապէս վիանում էր Շենացի երեխաները այսպէս ևն զրօնում կիրակի օրերը, շնջաց Շուրբինը թերսենեվի ականջին Խնքը Շուրբինը շատ գժութիւններ էր անում. առաջ էր վազում, յայտնի արձանների դիրքն էր ընդունում, թաւալում էր խոտի վրայ. Խնսարօվի հանգստութիւնը ոչ թէ գրգռում էր նրան, այլ հարկազրում էր կոտրատուել մինչ ես այդպէս ծոմառում, ով ֆրանսիացի», մի երկու անգամ նկատողութիւն արաւ սրան թերսենեվը «Այն, ես ֆրանսիացի եմ, կէս-ֆրանսիացի», պատասխանեց Շուրբինը. Ժիկ դու հանապէի և լրջութեան մէջտեղը կանչնիր, Խնչպէս մի անդամ ինձ ասում էր պանդոկի մի ծառայ, Երիտասարդները հեռացան գետից և գնացին մի նեղու խոր հեղեղատով, ոսկեգոյն, բարձրահասակ հաճարի երկու պատերի միջով. կապտանման ստուեր էր գցում նրանց վրայ այս պատկերից մէկը. ճաճանչաւոր արեղակը թւում էր թէ սահում է հասկերի ծայրերով, արտոյնները երգում էին, լորերը կանչում էին. ամեն տեղ կանաչում խոտերը, տաք հողմիկը շարժում և բարձրացնում էր նրանց թերթիչները, օրորում էր ծաղկելների գլուխները, Երկար թափառումներից, հանգստանալուց, շատախօսութիւններից յետոյ (Շուրբինը փորձեց մինչ անգամ չչափարդա խաղալ մի անցորդ անատամ գիւղացու հետ, որը շարունակ ծիծաղում էր, ինչ էլ նրան ասում էին պարունները)՝ Երիտասարդները հասան «ամենավատ» պանդոկին Ծաւան քիչ էր մնում որ նրանցից իւրաքանչիւրին վայր գցէ և ճիշտ որ կերակրեց նրանց շատ վատ ճաշով, որի հետ կար և ինչ որ անդրբալկաննեան զինի. բայց այդ բանը չէր արգելում նրանց ուրախանալ սրտանց, ինչ պէս գուշակել էր Շուրբինը. նա ինքը ամենքից բարձրաձայն էր ուրախութիւն անում, բայց և ամենքից քիչ, նա խմեց անհասկանալի, բայց մեծ Վենելինի կենացը, բօլդարական թագաւոր Կրամի, իւրամի թէ իդօմի կենացը, որ ապրում էր համարեա թէ Աղամի ժամանակները:

— Խնսերորդ գարում, ուղղեց Խնսարօվը:

— Խնսերորդ գարում, բացականչեց Շուրբինը — 0°, ինչ երանկութիւն:

Բերսենեվը նկատում էր, որ իր ըոլոր գոյիններից, հանգների մէջ Շուրբինը շարունակ կարծես թէ հարցաքննում էր Խնսարօվին, կարծես թէ չօշափում էր նրան և ներքուստ յուղում էր, — իսկ Խնսարօվը առաջուայ պէս մնում էր հանդիսա և պարզ:

Վերջապէս, նրանք տուն վերադարձան, փոխեցին իրանց շորերը և առաւօտեանից բանած ուղղութիւնից դուրս չը գա-

լու համար՝ վճռեցին նոյն երեկոյեան գնալ Ստախօվսերի մատ։
Շուրբինը առաջ վազեց, որ իմաց տայ նրանց գալու մասին։

XII

—Ներառ Խնսարօվը այս բոպէին չնորհ կը բերէ այստեղ,
հանդիսաւոր եղանակով բացականչեց նա, մտնելսվ Ստախօվի-
ների հիւրասենեակը, ուր այդ բոպէին գտնւում էին միայն Ե-
լենան և Զօնան։

—Ու՞՞ գերմաներէն հարցրեց Զօնան, Յանկարծակիի եւ-
կած միջոցին նա միշտ մայրենի լեզուով էր խօսում։ Ելենան
ուղղուեց, Շուրբինը նայեց մի չարաձճի ժպիտով։ Ելենայի համար
դա վիրաւորական էր. բայց նա ոչինչ չասաց։

—Դուք լսեցիք, կրկնեց Շուրբինը. —պարոն Խնսարօվը գա-
լիս է այստեղ։

—Լսեցի, պատասխանեց օրիորդը, և լսեցի թէ ինչ անուն
տուիք դուք նրան։ Զարմանում եմ ձեզ վրայ, ճշմարիտ։ Պա-
րոն Խնսարօվը դեռ այստեղ ոտ չէ դրել, և դուք արդէն հար-
կաւոր էք համարում կոտրատուել։

Շուրբինը յանկարծ կոտրուեց։

—Դուք ճշմարիտ էք, դուք միշտ ճշմարիտ էք, Ելենա Նի-
կոլանվեա, վնախինթաց նա. —բայց ես, Աստուած վկայ է, հէնց
այնպէս էի ասում։ Մենք ամրոջ օրը զրօնում էինք միասին
և նա, հաւատացնում եմ ձեզ, շատ լաւ մարդ է։

—Ես այդ մասին ձեզ չէի հարցնում, խօսեց Ելենան և վկր
կայաւ։

—Պարոն Խնսարօվը ջահէլ է, հարցրեց Զօնան։

—Նա հարիւր քառասուն չորս տարեկան է, պատասխանեց
Շուրբինը վշտացած։

Ծառան յայտնեց երկու բարեկամների գալուստը։ Նրանք
ներս մտան։ Բերսենեվը ներկայացրեց Խնսարօվին։ Ելենան
խնդրեց նրանց նստել և ինքն էլ նստեց, իսկ Զօնան գնաց վե-
րին. պէտք էր իմաց տալ Աննա Վասիլիվնային։ Սկսուեց մի ան-
նշան խօսակցութիւն, ինչպէս լինում են բոլոր առաջին խօ-
սակցութիւնները։ Շուրբինը լսելայն դիտում էր անկիւնից, բայց
դիտելու բան չը կար։ Ելենայի մէջ նա նկատում էր մի զայուած
արտնեղութեան հետքեր իր, Շուրբինի դէմ—և ուրիշ ոչինչ։ Նա
նայում էր Բերսենեվին և Խնսարօվին և, ինչպէս քանդակագործ
համեմատում էր նրանց դէմքերը։ Երկուուն էլ, մտածում էր նա,
գեղեցիկ չեն. բօլգարը ունի բնորոշ, քանդակադորձային դէմքը.
ահա այժմ նա լաւ լուսաւորուեց. իսկ վելիկուուսի դէմքը

աւելի նկարչութեան է դալիս. դժեր չը կան, կերպարանք կայ: Բայց մէկի և միւսի վրայ սիրահարուել կարելի է: Ելենան դեռ չէ սիրում, բայց կը սիրէ ներսւնենվին, վճոեց նա ինքն իր մէջ, — Աննա Վասիլիեվնան եկաւ հիւրասենեակ և խօսակցութիւնը ընդունեց բոլորովին ամարանոցային կերպարանք, ճշշտ ամարանոցային և ոչ գիւղական: Դա շատ բազմակողմանի խօսակցութիւն էր քննուող առարկաների առատութեան կողմից. բայց կարծիկ, բաւական ձանձրացուցիչ դադարները ընդհատում էին նրան համարեա իւրաքանչիւր երեք բոպէն մի անդամ: Այդպիսի լուութեան ժամանակ, Աննա Վասիլիեվնան դարձաւ դէպի Զօնան: Շուրբինը հասկացաւ նրա անխօս ակնարկը և թթուացեց իր դէմքը, իսկ Զօնան նատեց դաշնամուրի առաջ, ածեց և երգեց իր իմացած բոլոր կտորները: Ուվար իվանօվիչը երեւաց դռան ետերից, բայց շարժեց մատները և մէկ էլ յետ գնաց: Յետոյ թէյ բերին, յետոյ ամենքը պտոյտ արին այցում... Դըրսում մութը կոխեց, և հիւրերը հեռացան:

Ինսարովը իսկ որ քիչ տպաւորութիւն գործեց Ելենայի վրայ, քան Ելենան էր սպասում կամ, աւելի ճիշտն ասած, նա այն տպաւորութիւնը չը գործեց, ինչ սպասում էր Ելենան, Նրան դուր եկաւ Ինսարօվի շիտակութիւնը և ազատ պահուելը, դէմքն էլ նրան դուր եկաւ. բայց Ինսարօվի ամբողջ էութիւնը, հանդարտ, ամուր և սովորականի պէս հասնարակ, չէր ներգաշնակում այն պատկերի հետ, որ կազմուել էր օրիորդի զլիսում Բերսենեվի պատմութիւնից: Ելենան, անգիտակցաբար սպասում էր աւելի ճակատագրական բանի: Բայց, մտածում էր նա, այսօր Ինսարօվը շատ քիչ խօսեց, մեղաւորը ես ինքս եմ. ես հարց ու փորձ չէի անում նրանից, սպասենք մինչեւ միւս անգամ... բայց նրա աչքերը արտայայտիչ են, աղնիւ են: Նա զգում էր որ ինքը խոնարհուել չէր ուզում Ինսարօվի առաջ, այլ բարեկամաբար ձեռք տալ նրան. և նա տարակուսանքի մէջ էր. այսպէս չէր նա երեսակայում Ինսարօվի նման մարդկանց, «հերոսներին»: Այս վերջին խօսքը յիշեցնում էր Շուրբինին, և Ելենան, որ արդէն պառկել էր անկողնում, տաքացաւ և բարկացաւ:

— Ի՞նչպէս հաւանեցիք ձեր նոր ծանօթներին, հարցրեց վերադարձին Բերսենեվը Ինսարօվից:

— Նրանք ինձ շատ դուր եկան, պատասխանեց Ինսարօվը, — մանաւանդ աղջիկը, Երեխ հիանալի աղջիկ է: Նա յուղում է, բայց նրա մէջ դա լաւ յուզմունք է:

— Պէտք է նրանց մօտ յաճախակի զնալ, նկատեց Բերսենեվը:

—Այս, պէտք է, ասաց Խնսարօվը և ուրիշ մի խօսք չար-
տառանեց մինչև տուն հասնելը, Նա իսկոյն փակուեց իր սե-
նեակում, բայց կրակը նրա մօտ այրուում էր կէս զիշերից շատ
անցած:

Բերսենեվը դեռ չէր կարողացել մի էջ կարդալ Րառումն-
թից, երբ զրափից շպրտած մի բուռ աւազը թրիսկաց նրա պա-
տուհանի ապակիներին, Նա ակամայ ցնցուեց, բաց արաւ պա-
տուհանը և տեսաւ Շուրինին, որ գունատ էր կտակի նման:

—Ի՞նչ անհանգիստն ես եղել, կատարեալ գիշերային թի-
թեռնիկ, սկսեց Բերսենեվը:

—Սուս, ընդհատեց Շուրինը. ես ծածուկ եկայ քեզ մօտ,
ինչպէս Մաքսը Ագաթայի մօտ: Ի՞նձ անպատճառ հարկաւոր է
առանձին երկու խօսքը ասել քեզ:

—Դէ մտիր սենեակը:

—Ոչ, հարկաւոր չէ, պատասխանեց Շուրինը և արմունկ-
ներով յենուեց պատուհանին.—այսպէս աւելի ուրախալի է,
աւելի Սպանիային է նման: Նախ և առաջ, չնորհաւորում եմ
քեզ, քո արժէթղթերը բարձրացան: Քո գոված, անսովոր մար-
զը խորակուեց: Այս մասին ես կարող եմ երաշխաւոր լինել:
Խակ որպէս զի ապացուցանեմ իմ անկողմնապահութիւնը, լսիր.
ահա պարոն Խնսարօվին ցցուցակ ծառայութեանը. ոչ մի տա-
զանդ, պօէզիա չը կայ, աշխատելու ընդունակութիւն անվերջ,
մեծ յիշողութիւն ունի, խելքը բազմակողմանի չէ և ոչ էլ խոր.
բայց առողջ, վառվառն է. չորութիւն և ոյժ, նոյն խակ խօսելու
ընդունակութիւն, երբ բանը դալիս է իր, մեր մէջ ասած, ա-
մենատաղտկալի հօլգարիայի մասին: Ի՞նչ, դու կ'ասես թէ ես
անարդար եմ: Ելի մի նկատողութիւն. դու երբէք նրա հետ
դու-ով չես խօսի, և ոչ ոք նրա հետ դու-ով չէ խօսել. ես, որ-
պէս արտիստ, նրան ատելի եմ, որով և հպարտանում եմ Զո-
րութիւն, չորութիւն, և մեզ ամենքիս կարող է փոշի դարձնել:
Նա կապուած է իր հողի հետ, ոչ այնպէս, ինչպէս մեր դա-
տարկ ամանները, որոնք քամուում են ժողովրդին և ասում են.
Թափուիր մեր մէջ, կենդանի ջուր: Սակայն նրա դործն էլ
հետ է, աւելի հետ հասկանալի. պէտք է միայն թիւքքերին
վճռտել, մեծ բան է, էլի՞ Բայց այդ բոլոր յատկութիւնները,
փառք Աստուծու, կանանց չեն դուր գալիս: Հմաք չը կայ. ու-
րիշ բան ենք ես և դու:

—Ի՞նձ ինչու խառնեցիր, փնթվնթաց Բերսենեվը:—Մնա-
ցածների մէջ էլ դու անարդար ես. դու բոլորովին նրան ատե-
մ չես, և իր հայրենակիցների հետ նա դու-ով է խօսում... ես
այդ գիտեմ:

— Դա ուրիշ բան է: Հայրենակիցների համար նա հերոս է, բայց ես, խոստովանում եմ, ուրիշ կերպ եմ երևակայում հերոսներին: Հերոսը չը պիտի իմանայ խօսել: Հերոսը բառաշրմ է ինչպէս եղ. բայց եթէ եղջիւրը շարժէ, պատերը կը թափուեն: Նա ինքն էլ չը պիտի իմանայ թէ ինչու է եղջիւրը շարժում, բայց շարժում է: Բայց գուցէ մնը ժամանակներում պահանջում են ուրիշ չափի հերոսներ:

— Այդ ինչու է Խնարօվը քեզ այդքան հետաքրքրում, հարցրեց Բերսենեվը: — Միթէ դու հէնց նրա համար ես վազել այստեղ, որ նկարագրես նրա բնաւորութիւնը:

— Ես եկայ այստեղ, ոկանց Շուրբինը, — որովհետև տանը շատ տիսում էի:

— Հա: Հօ էլ չես ուզում լաց լինել:

— Մաղրիք, ես եկայ այստեղ, որովհետև պատրաստ եմ իմ արմունկները կրծել, որովհետև յուսահատութիւնը ինձ կրծում է, վիշտը, խանդոտութիւնը...

— Խանդոտութիւնը. դէպի ոււմ:

— Դէպի քեզ, դէպի նրան, դէպի ամենքը: Ինձ կեղեքում է այն միտքը, որ եթէ ես Ելենային առաջուց հասկանայի, եթէ ես լաւ գործին կացէի... Բայց ինչ խօսել: Բանը նրանով կը վերջանայ, որ ես միշտ կը ծիծաղեմ, յիմարութիւններ կ'անեմ, կը կոտրատուեմ, ինչպէս Ելենան է ասում, և ապա վեր կ'առնեմ ու կը խեղդուեմ:

— Խեղդուելը ասենք չես խեղդուի, նկատեց Բերսենեվը:

— Այսպիսի գիշերը ի հարկէ ոչ. բայց թող հասնենք աշնան: Այսպիսի գիշերը մարդիկ նոյնպէս մեռնում են, բայց միայն երջանկութիւնից: Ախ, երջանկութիւն, իւրաքանչյուր ծառի ստուեր, որ ճանապարհի վրայով երկարացած է, կարծես այժմ շնջում է. «Գիտեմ ես թէ ուր է երջանկութիւնը... Ուզում ես ասեմ»: Ես քեզ կը կանչէի ման զալու, բայց դու այժմ պրօզայի աղղեցութեան տակ ես: Քնիր, և թող մաթերատիկական ձեեր երեան քեզ քնում: Իսկ իմ մէջ հոգիս պատառ-պատառ է դառնում: Դուք, պարոններ, տեսնում էք որ մարդը ծիծաղում է, ուրեմն, ձեր կարծիքով, նա դարդ չունի: Դուք կարող եք ապացուցանել, որ նա ինքն իրան հակասում է, ուրեմն և չէ ասնջում: Տէրը ձեզ հետ:

Շուրբինը արագ քայլերով հեռացաւ պատուհանից: «Անուշ-կա», ուզում էր կանչել Բերսենեվը նրա ետեից, բայց պահեց իրան: Շուրբինը, ճիշտ որ, սաստիկ այլայլուած էր: Երկու րոպէ անցած, Բերսենեվին թուաց թէ լոռմ է հեծեծանքներ. նա վեր կացաւ, բաց արեց պատուհանը: ամեն ինչ հանդարտ էր,

միայն հեռւում մի ինչ որ տեղ մի, երեխ, ճանապարհորդ գիւղի, երգում էր «Մօղջօկի դաշտավայրը»:

XIII

Կունցօվիօի մօտ տեղափոխուելուց առաջին երկու շաբաթ-ների ընթացքում ինսարօվը չորս թէ հինգ անգամից աւել չէր այցելել Ստավոլիվներին. Բերսենեվը զնում էր նրանց մօտ օրա-մէջ Ելենան միշտ ուրախանում էր նրանով. միշտ երկուսի մէջ սկսում էր աշխոյժ և հետաքրքրական խօսակցութիւն, բայց դարձեալ Բերսենեվը վերադառնում էր տուն յաճախ տիսուր գէմքով. Շուրբնը համարեա չէր երևում. նա տենդային եւանդով պարագում էր իր արուեստով. կամ նստում էր իր փակ սենեակում և դուրս էր վաղում այստեղից բլուզայի մէջ, ամբողջովին կաւոտ դառած, կամ օրեք էր անցնում Մոսկուայ-ում. այնտեղ ունէր արհեստանոց, ուր գալիս էին իտալացի կաղապարագործները, նրա ծանօթները և ուսուցիչները: Ելե-նան ոչ մի անգամ խօսք չը սկսեց Ինսարօվի հետ այնպէս, ինչ-պէս ինքն էր ուղում. քանի երիտասարդը բացակայ էր, Ելենան պատրաստում էր հարց ու փորձ անել շատ բանի մասին, բայց երբ Ինսարօվը գալիս էր, նա ամաչում էր իր պատրաս-տութիւններից: Ինսարօվի հանգստութիւնը շփոթեցնում էր նրան. նրան թւում էր թէ իրաւունք չունի հարկադրել երի-տասարդին խօսել, և վճռեց դեռ սպասել. այնուամենայնիւ, նա զգում էր, որ երիտասարդի իւրաքանչիւր այցելութեան ժամանակ, որքան էլ աննշան լինէին նրանց մէջ փոխանակ-ուած խօսերը, Ինսարօվը աւելի և աւելի զրաւում էր նրան. բայց գէաք չը պատահեց, որ Ելենան նրա հետ առանձնանայ, իսկ մի մարդուն մօտենալու համար հարկաւոր է գոնչ մի ան-գամ խօսել նրա հետ երես առ երես Ելենան շատ էր խօսում Բերսենեվի հետ նրա մասին: Բերսենեվը հասկանում էր որ Ե-լենայի երեակայութիւնը յափշտակել է Ինսարօվը և ուրախ էր որ իր բարեկամը չէ խորտակուել, ինչպէս հաստատում էր Շուրբինը. նա կրակ կտրած, ամենափոքր մանրամասնութիւն-ներով, պատմում էր Ելենային այն ամենը, ինչ զիտէր Ինսա-րօվի մասին (մենք յաճախ, երբ ինքներս ուզում ենք դուր գալ մի ուրիշ մարդուն, սաստիկ գովում ենք նրա հետ խօսելիս մեր բարեկամներին, համարեա երբէք չը կասկածելով, որ դրա-նով մենք մեզ ենք գովում): Եւ երբեմն, երբ Ելենայի գունատ թշեթը թեթև կերպով կարմրում էին, իսկ աչերը փայլում և

լայնանում էին, այն վատ թափեցը, որ արդէն յայտնի էր Բեր-
սենեվին, սեղմում էր նրա սիրտը:

Մի անգամ Բերսենեվը եկաւ Ստախօվների մօտ ոչ սովո-
րական ժամանակին, առաւօտեան ժամի տասնեւմէկին մօտ, Ե-
լենան գնաց նրա մօտ գահինքը:

—Երեւակայեցէք, սկսեց Բերսենեվը մի բռնազրօսիկ ժը-
պիտով—մեր Խնսարօվը կորել է:

—Ի՞նչպէս թէ կորել է, ասաց Ելենան:

—Կորել է: Անցեալ օրը երեկոյեան գնացել է մի ինչ որ
աեղ և մինչև այժմ չը կայ:

—Նա ձեղ շասաց թէ ուր է գնում:

—Ո՛չ:

Ելենան նստեց աթոռի վրայ:

—Նա, երեւի, Մոսկուա է գնացել, ասաց նա, աշխատե-
լով անտարբեր երեւալ և մինսոյն ժամանակ ինքն էլ զարմա-
նալով որ աշխատում է անտարբեր երեւալ:

—Չեմ կարծում, պատասխանեց Բերսենեվը:—Նա մնակ
չէր:

—Ում հետ էր:

—Անցեալ օրը, ճաշից առաջ, նրա մօտ եկան ինչ որ եր-
կու մարդիկ, երեւի նրա հայրենակիցները:

—Բոլոր կարմիր, ինչու էք այդպէս կարծում:

—Այն պատճառով, որ որքան ես կարողացայ լսել, նրանք
խօսում էին նրա հետ մի լեզուով, որ ինձ անծանօթ էր, բայց
ոլաւօնական... Այ դուք, Ելենա Նիկոլաեվնա, շարունակ ասում
էք թէ Խնսարօվի մէջ խորհրդաւոր բան քիչ կայ. այս այցելու-
թիւնից աւել ինչ խորհրդաւոր բան, Երեւակայեցէք. մտան
նրա մօտ—և սկսեցին աղաղակել ու վիճել և այնպէս վայրենի,
կատաղի կերպով... Նա էլ էր աղաղակում:

—Նա էլ:

—Նա էլ Բղաւում էր նրանց վրայ, նրանք կարծես գան-
գաւուում էին միմեանցից: Եւ եթէ դուք նայէլք այդ այցելու-
ներին: Թուխի, լայն այտոսկրաւոր դէմքեր, բութ, բազէի քթե-
րով, ամեն մէկը քառասուն տարեկանից աւել կը լինէր, հադ-
նուած են վատ, փոշու, քրտինքի մէջ են Արտավին տեսքով
արհեստաւորներ են և արհեստաւորներ չեն, ոչ էլ սլարոններ...
Աստուած գիտէ, թէ ինչ մարդիկ են:

—Եւ նա գնաց զրանց հետ:

—Դրանց հետ, Կերակրեց, ապա դուրս գնաց դրանց հետ:
Տանտիկինն ինձ ասում էր—երկուսով մի ամբողջ ահագին կը-

ճուճ կաշա կերան։ Այնպէս միմնանց ետեից կուլ էին տալիս, կարծես գալիեր լինեն։

Ելենան թոյլ կերպով ծիծաղեց։

—Դուք կը տեսնէք, ասաց նա.—այս բոլորը կը վերջառայ մի շատ պրօզափկ բանով։

—Աստուած տայր Բայց դուք զուր զործ ածեցիք այդ բառը։ Խնսարօվի մէջ պրօզափկ բան չը կայ, թէև Շուբինը հաւատայնում է...»

—Շուբինը, ընդհատեց Ելենան և թոթուեց ուսերը։—Բայց խոստովանեցէք, այդ երկու պարոնները, որոնք կլանում են կաշան...»

—Թեմիստոկլէսն էլ Սալամինեան պատերազմի նախընթաց օրը ուտում էր, ժպտալով նկատեց Բերսենեվը։

—Այդպէս է. բայց միւս օրն էլ պատերազմ կար։—Բայց դուք էլ ինձ իմաց տուէք, երբ նա կը վերադառնայ, աւելացրեց Ելենան և փորձեց փոխել խօսակցութիւնը, սակայն խօսակցութիւնը չէր կապւում։ Երեւաց Զօնեան և սկսեց ման զալ սեննակում ոտների մասների վրայ, իմաց տալով դրանով, թէ Աննա Վասիլեվան դեռ քնից չէ զարթնել։

Բերսենեվը գնաց։

Նոյն օրը երեկոյեան բերան նրան մի տոմսակը Ելենային։ «Վերադարձաւ, զրում էր նա։—արեւակէզ, փոշիի մէջ թաթախուած մինչն յնպերը, բայց ինչու և ուր էր զնացել, չը գիտեմ. արդեօք չէք իմանայ դուք»։

—Զքը իմանայ դուք, շնչաց Ելենան։—Միթէ նա խօսում է ինձ հետ։

XIV

Միւս օրը, ժամի մօտ երկուսին, Ելենան կանգնած էր այդում մի փոքրիկ բոյնի առաջ, ուր նա կրթում էր զամփոփ երկու լակոտննր (Այգեպանը գտել էր նրանց ցանկապատի տակ զցած և բերել էր օրիորդին, որի մասին նրան ասել էին լոււացարարները, թէ նա ամեն գաղաններին և անասուններին սիրում է։ Նա չը սխալուեց, Ելենան նրան 25 կոպէկ տուեց)։ Ելենան նայեց բոյնին, համոզուեց որ լակոտները ողջ և առողջ են և նրանց առաջ թարմ, չոր յարդ են փոել, շուռ եկաւ և քիչ մնաց որ աղաղակէ. ուղիղ գէպի նրան, ծառուղիով, գալիս էր Խնսարօվը մենակ։

—Բարև Ճեզ, ասաց նա, մօտենալով օրիորդին և վերցնելով գդակը, Ելենան նկատեց որ ճիշտ է, վերջին երեք օրերում

նրա դէմքը արեակէզ է դարձել — Ես ուզում էի գալ այստեղ
Անդրէյ Պետրօվիչի հետ, բայց նա ուշացաւ, Եւ ահա եկայ առանց
նրան։ Ձեր տանը ոչ ոք չը կայ. ամենքը քնած են
կամ զրօնում են, ուստի ես եկայ այստեղ։

— Դուք, կարծես, ներողութիւն էք ինդրում, պատասխանեց Ելենան։ — Այդ բոլորովին հարկաւոր չէ։ Մենք շատ ուրախ ենք ձեզ տեսնել. . . Նստենք այս նստարանի վրայ, շուտքում։

Նա նստեց։ Խնսարօվը տեղաւորուեց նրա կողքին։

— Դուք կարծեօք տանը չէիք այս վերջին օրերը, սկսեց Ելենան։

— Այն, պատասխանեց նա. — Ես գնացել էի... Ձեզ Անդրէյ Պետրօվիչն ասաց, չէ։

Խնսարօվը նայեց օրիորդին, ժպտաց և սկսեց խաղացնել գդակը։ Ժպտալով, նա արադ ճպճպում էր և շրթունքները առաջ էր ձգում և այս բանը նրան շատ բարեհոգի կերպարանք էր տալիս։

— Անդրէյ Պետրօվիչը, երեխ, ձեզ նոյնպէս ասաց որ ես գնացի ինչ որ... անձոռնի մարդկանց հետ, ասաց նա, շարունակելով ժպտալ։

Ելենան փոքր ինչ շփոթուեց, բայց իսկոյն զգաց, որ Խնսարօվին միշտ ճշմարիտը պէտք է ասել։

— Այն, ասաց նա վճռական ձևով։

— Իսկ դուք ինչ մտածեցիք իմ մասին, հարցրեց նա յանկարծ։

Ելենան բարձրացրեց աչքերը, նրան նայեց։

— Ես մտածում էի, ասաց նա... Ես մտածում էի, որ դուք միշտ զիտէք թէ ինչ էք անում և որ դուք որ և է վատ բան անելու ընդունակ չէք։

— Ծնորհակալ եմ ձեզնից դրա համար, Գիտեք, Ելենա Նիկոլաեվնա, սկսեց նա մի առանձին, կարծես, վատահ կերպով մօտ նստելով նրան. — մերոնցից այստեղ մի փոքրիկ ընտանիք կայ. կան նրանց մէջ քիչ կրթուած մարդիկ. բայց ամենքը թունդ նուիրուած են ընդհանուր դործին։ Դժբախտաբար, առանց վէճերի, կոփէների չէ լինում, իսկ ինձ ամենքն են ճանաչում, ինձ հաւատում են. ահա ինձ կանչեցին որ մի այդպիսի կռուի վերահասու լինեմ. Ես գնացի։

— Հեռող այստեղից։

— Ես վաթսում վերստից աւել գնացի, Տրօիցկի պօսադը Այնտեղ, վանքում, նոյնպէս կան մերոնցից։ Գոնէ աշխատանքս զուր չը կորաւ. դործը շտկեցի։

— Դա դժուար էր ձեզ համար։

—Դժուար էր: Մէկը շարունակ յամառում էր: Փողը չէր
տալիս:

—Ինչպէս: Կոխւը փողին համար էր:

—Այո, և փողն էլ մեծ փող չէր: Իսկ դուք ինչ էիք են-
թաղում:

—Եւ դուք այդպիսի դատարկ բաների համար վաթսուն
վերստ ճանապարհ զնացիք. երկք օր կորցրիք:

—Դատարկ բան չէ, Ելենա Նիկոլաեվնա, երբ հայրենա-
կիցներդ են խանուում: Այդ դէպքում մերժելը մեղք է: Դուք,
ահա տեսնում եմ, նոյն իսկ լակոտներին չէք մերժում ձեր օդ-
նութիւնը, և ես ձեզ գովում եմ դրա համար: Բայց թէ ես ժա-
մանակ կորցրի, դա ցաւ չէ, ես յետոյ էլի կ'անեմ: Մեր ժամա-
նակը մեղ չէ պատկանում:

—Իսկ ում է պատկանում:

—Ամենքին, որոնք կարոտ են մեր օգնութեան: Այս ամե-
նը ես ձեզ պատմեցի վայրիվերոյ, որովհետև ինձ համար թանգ
է ձեր կարծիքը: Ես երեակայում եմ թէ Անդրէյ Պետրօվիչը
ինչպէս կը լինի ձեզ զարմացրած:

—Զեղ համար թանգ է իմ կարծիքը, ասաց Ելենան կի-
սատ ձայնով: —Ինչո՞ւ:

—Որովհետև դուք լաւ օրիորդ էք, արիստօկրատուհի չեք...
ահա և ամենը:

Փոքրիկ լոռութիւն աիրեց:

—Դիմիարի Նիկանօրօվիչ, ասաց Ելենան: —զիտէք դուք
որ առաջին անգամն էք ինձ հետ այդքան սրտաբաց:

—Ո՞սց թէ: Ինձ թւում է, թէ միշտ եմ ձեզ ասել այն,
ինչ մտածում եմ:

—Ոչ, սա առաջին անգամն է, և ես դրանով շատ ուրախ
եմ, —ես էլ ուղում եմ ձեզ հետ սրտաբաց լինել: Կարելի է:

Ինսարօվը ծիծաղեց և ասաց.

—Կարելի է:

—Նախազգուշացնում եմ ձեզ, որ ես շատ հետաքրքր-
ուողն եմ:

—Ոչինչ, ասացէք:

—Անդրէյ Պետրօվիչը ինձ շատ բան է պատմել ձեր կեան-
քից, ձեր երիտասարդութիւնից: Ինձ յայտնի է մի հանգամանք,
մի սարսափելի հանգամանք... Ես զիտեմ որ դուք յետոյ գնա-
ցել եք ձեր հայրենիքը... Մի պատասխանէք ինձ, ի ոէր Աս-
տուծու, եթէ իմ հարցը ձեզ անհամեստ կը թուայ, բայց ինձ
առաջում է մի միտք... Ասացէք, դուք հանդիպեցիք այն մար-
դուն...

Ելենայի շնչառութիւնը կանգ առաւ, նա թէ ամաչեց և
թէ սարսափեց իր համարձակութիւնից, ինսանօվը յառել էր
նրա վրայ իր կիսախուփ աջքերը և մատներով իր ծնօան էր
շօշափում:

—Ելենա Նիկոլաեվնա, սկսեց նա վերջապէս, և նրա ձայնը
սողորականից էլ հանդարտ էր, որ և համարեա վախսեցրեց Ե-
լենային.—ես հասկանում ևմ թէ ինչ մարդու մասին յիշատա-
կեցիք այս բոպէին: Ոչ, ես նրան չը հանդիպեցի, և փառք Առ-
տուծու: Ես նրան չէի որոնում ոչ թէ այն պատճառով, որ ի-
րաւունք չէի համարում սպանել նրան—ես շատ հանդիսա կեր-
պով կը սպանի նրան—այլ այն պատճառով, որ այնտեղ մաս-
նաւոր վրէժի բան չէ կարող լինել, ուր ժողովրդի, ընդհանու-
րի վրէժի գործ կայ... ոչ, այս խօսքը անպէտք է... երբ մի
ժողովուրդ ազատելու գործ կայ: Մէկը միւսին կը խանդարէր:
Ժամանակին այն մարդն էլ չի պրծնի... նա էլ չի պրծնի,
կրկնեց նա և շարժեց զլուխը:

Ելենան նրան նայեց կողքից:

—Դուք շատ էք սիրում ձեր հայրենիքը, արտասանեց նա
հեղութեամբ:

—Այդ գեռ յայտնի չէ, պատասխանեց նա:—Ահա երբ մե-
զանից մէկը կը մեռնէ հայրենիքի համար, այն ժամանակ կա-
րելի կը լինի ասել թէ նա սիրում է հայրենիքը:

—Այնպէս որ եթէ ձեղ զրկէին Բօլգարիա վերադառնալու
կարողութիւնից, շարունակեց Ելենան—ձեղ համար շատ ծանր
կը լինէր Ռուսաստանում:

Ինսարօվը զլուխ կախ արաւ:

—Ինձ թւում է, որ ես չէի կարող տանել այդ բանը, ա-
սաց նա:

—Ասացէք, նորից սկսեց Ելենան—դժուար է բօլգարական
լեզուն սովորելը:

—Ամենաին: Ռուսի համար ամօթ է բօլգարերէն չիմանալը:
Ռուսը պիտի իմանայ բոլոր սլատօնական բարբառները: Կամե-
նում էք, ես ձեղ համար բօլգարական դրեր կը բերեմ: Դուք
կը տեսնէք թէ որքան հեշտ է: Մ՛րպիսի երգեր ունենք մենք,
սերբիականներից վաս չեն: Սպասեցէք, ես հիմա ձեղ համար
կը թարգմանեմ զրանցից մէկը: Բայց դուք գոնէ քիչ ծանծթ էք
մեր պատմութեան:

—Ոչ, ես բոլորովին ծանօթ չեմ, պատասխանեց Ելենան:

—Սպասեցէք, ես կը բերեմ ձեղ մի գիրք: Դուք նրանից
գէթ զլսաւոր փաստերը կ'իմանաք: Ուրեմն լսեցէք երգը... Բայց
աւելի լաւ է, ես կը բերեմ գրած թարգմանութիւնը: Համոզ-

ուած եմ, որ դուք կը սիրէք մեզ. դուք բոլոր ճնշուածներին.
Էք սիրում եթէ դուք իմանաք, ինչ օրհնուած երկիր է մեր
Նրկիրը, Եւ սակայն նրան կոփոտում են, նրան ծուատում են,
աւելացրեց նա ձեռքի մի ակամայ շարժմոնքով և նրա գէմքը
մթազնեց—մեղնից խլեցին ամեն ինչ, ամեն ինչ. մեր եկեղեւ
ցիները, մեր իրաւունքները, մեր հողերը. նախրի պէս են մեզ
քշում անիծուած թիւքերը, մեզ մորթում են...

—Դմիտրի Նիկանօրօվինչ, բացականչեց Ելենան:

Ինսարօվը կանգ առաւ:

—Ներեցէք ինձ, Ես չեմ կարող այդ մասին խօսել սառ-
նաօրտովթեամբ, Բայց դուք այս բոպէին հարցնում էիք ինձ
սիրում եմ ես իմ հայրենիքը! Էլ ուրիշ բնչ բան կարելի է սի-
րել աշխարհում: Ի՞նչն է միակ անփոփոխը, ինչն է բոլոր կաս-
կածներից բարձրը, բնչն է, որին չէ կարելի չը հաւատալ Առ-
տուծուց յնտոյ: Եւ երբ այդ հայրենիքը կարօտ է քեզ... Նկա-
տեցէք. Բօլզարիալի վերջին զիւղացին, վերջին մուրացկանը
և ես—մենք մի և նոյն բանն ենք յանկանում: Մենք ամենքս
մի նպատակ ունենք: Հասկացէք թէ դա ինչ վստահութիւն և
ոյժ է տալիս:

Ինսարօվը մի վայրկեան լոեց, և նորից էլի խօսեց Բօլ-
զարիայի մասին: Ելենան լսում էր նրան մի լափող, խոր և
տիսուր ուշադրութեամբ: Երբ Ինսարօվը վերջին մուրացկանը
և ես—մենք մի և նոյն բանն ենք յանկանում: Մենք ամենքս

—Ուրեմն դուք ոչ մի կերպ չէիք մնայ Ռուսաստանում:
Իսկ երբ Ինսարօվը գնաց, նա երկար նայում էր նրա ե-
աեից: Բօլզարը այդ օրը նրա համար ուրիշ մարդ դարձաւ: Եր-
կու ժամ առաջ նա այնպէս չէր դիմաւորում երիտասարդին,
ինչպէս այժմ ճանապարհ էր դնում:

Այդ օրից Ինսարօվը սկսեց աւելի և աւելի յաճախ գալ,
իսկ Բերսենեվը աւելի և աւելի սակաւ: Երկու բարեկամների
մէջ մի ինչ որ օտարութիւն ունէր, որը երկուսը
լաւ էին զգում, բայց անուանել չէին կարողանում, իսկ բացա-
տրել վախենում էին: Այսպէս անցաւ մի ամիս:

XV

Աննա Վասիլեվսան սիրում էր տանը նստել, ինչպէս յայտ-
նի է ընթերցողին. բայց երբեմն, բոլորովին անսպասելի կեր-
պով, նրա մէջ երեան էր գալիս մի ինչ որ անսովոր բանի, մի-
որ և է զարմանալի partie de plaisir-ի ցանկութիւն. և որքան-
դժուար էր այս partie de plaisir-ը, որքան շատ պատրաստու-

թիւններ էր նա պահանջում, այնքան աւելի շատ էր յուզւում
ինքը, Աննա Վասիլեվսան, այնքան այդ բոլորը ախորժելի էր
նրա համար, եթէ այդ գքամինա ձմեռն էր գալիս նրա վրայ—նա
հրամայում էր երկու երեք օթեակներ վարձել միմեանց կողքին,
հաւաքում էր իր բոլոր ծանօթներին և գնում էր թատրոն կամ
նոյն իսկ դիմակահանդէս, եթէ ամառն էր գալիս—գնում էր
քաղաքից դուրս, մի որ և է հեռու տեղու Միւս օրը նա գան-
գատում էր թէ իր զլուխը ցաւում է, տնքում էր, անկողնից
չէր դուրս գալիս, իսկ մի երկու ամսից յետոյ նրա մէջ էլի
սկսում էր ճանսովոր բանից ցանկութիւնը, նոյնը պատահեց
և այժմ: Մէկը խօսեց նրա մօտ ծարիցինօի գեղեցկութիւնների
մասին, և Աննա Վասիլեվսան յանկարծ յայտարարեց, որ նա է-
գուց չէ միւս օրը մտադիր է գնալ ծարիցինօ: Տան մէջ իրա-
րանցում սկսուեց, յատուկ սուբրանդակ գնաց Նիկոլայ Արտե-
մովիչի ետեից, Մոսկուա. նրա հետ գնաց և վերակացուն զի-
նիներ, պաշտետ և այլ ուտելեղէններ դնելու. հրաման արձակ-
ուեց Շուբրինին վարձել մի կառք ևս (կար մի հատը, բայց բա-
ւական չէր) և պատրաստել ձիեր ճանապարհին փոխելու հա-
մար. ծառան երկու անզամ վազեց Բերսենևի և Խնսարօվի
մօտ և տարաւ երկու հրաւիրաթուղթ նրանց անունով, որուք
զրուած էին Զօնայի ճեռքով նախ ուռւսերէն, յետոյ ֆրանսերէն:
Ինքը Աննա Վասիլեվսան հոդ էր տանում օրիորդների ճանա-
պարհորդական զգեստի մասին: Մինչ այդ՝ քարտէ ծ թալիսից-ը
քիչ էր մնում որ խանգարովի. Նիկոլայ Արտեմովիչը եկաւ
Մոսկուայից թթուած և տհաճ, կոռեկու տրամադիր: (Նա
փրուած էր Աւգուստինա Խրիստիանօվսայի վրայ) և, իմանալով
թէ ինչու են իրան կանչել, վճռականապէս յայտարարեց թէ
ինքը չի գնայ, թէ արշաւել կոնցովից Մոսկուա, Մոսկուայից
ծարիցինօ, իսկ ծարիցինօից գարձեալ Մոսկուա և Մոսկուայից
գարձեալ Կոնցովո—անհեթեթութիւն է,—և վերջապէս, աւելա-
ցրեց նա, թող նախ և առաջ ապացուցանեն թէ երկրազնդի մի
կէտում կարելի է աւելի ուրախ լինել, քան մի այլ կէտում,
այն ժամանակ ես կ'երթամ: Այդ բանը, ի հարկէ, ոչ ոք չէր
կարող ապացուցանել, և Աննա Վասիլեվսան, լուրջ կավալեր
չունենալու պատճառով, արդէն պատրաստ էր հրաժար-
ուել partie ծ թալիսից-ից, բայց յիշեց Ուվար Խվանովիչին և
անհարութիւնից մարդ ուղարկեց նրա ետեից, ասելով. օխեղ-
դուողը յարդից էլ է բանում: Ուվար Խվանովիչին դարթեցրին.
նա ցած իջաւ, լուռ լսեց Աննա Վասիլեվսայի առաջարկութիւնը,
խաղաղութ մատները և ի զարմանս ամենքի համաձայնուեց: Աննա Վասիլեվսան համբուրեց նրա թուշը, անուանեց նրան

սիրելիք. Նիկոլայ Արտեմինվիչը ատելութեամբ ժպտաց և ասաց. Quelle bourse! (նա սիրում էր տեղը եկած ժամանակ դործ աւծել ֆրանսիական շիլկ բառեր) — իսկ միւս առաւօտը երկու կառքերը բոլորովին ընմաւորուած դուրս գնացին Ստախով-ների ամարանոցի բակից, Տնային կառքում նստած էին կանաքը, աղախինը և Բերսենեվլը, Ինսարօվը տեղաւորուեց կառապանի մօտ. իսկ միւս, վարձովի կառքում զտնւում էին Ուվար Խվանօվիչը և Շուրինը. Ուվար Խվանօվիչը ինքն էր որ մատիշարժուած կանչեց Շուրինին իր մօտ. թէ զիտէր որ նա ճանապարհին մի զլուխ պիտի իրան ջգրացնէ, բայց արդաւանդոյժիւ և երիտասարդ զեղարուեստագէտի մէջ գոյութիւն ունէր մի տարօրինակ կապ և ընրան-պատուածների սրտաբացութիւն։ Պէտք է ասել, որ այս անգամ Շուրինը իր հաստ բարեկամին հանգիստ թողեց. նա լուռ էր, ցրուած և կակուդ։

Արեգակը արդէն բարձր կանգնած էր անամպ և րկնակամարի վրայ, երբ կառքերը մօտեցան Յարիցինօի ամբոցի աւերակներին, որոնք մոայլ ու ահաւոր են նոյն իսկ կէսօրին։ Ամենքը ցած իջան և իսկոյն դիմեցին այդին։ Առջնից գնում էին Ելենան և Զօնեան Ինսարօվի հետ, նրանց ևտեից կառարեալ երջանկութիւն արտայատող դէմքով շարժուում էր Աննա Վասիլիկելինան Ուվար Խվանօվիչի հետ թեանցուկ, Վերջինս տքում էր և օրօրուելով էր քայլում, յարդէ նոր զլիսարկը կտրում էր նրա ճակատը, իսկ ուները այրուում էին կօշիկների մէջ, բայց նա իրան լաւ էր զգում. Շուրինը և Բերսենեվլը զնում էին ամենից յետոյ, «Մենք, եղբայր, պահեստի մէջ կը լինենք, որպէս վետերաններ», Հնջաց Շուրինը Բերսենեվլ ականջին, «Այստեղ այժմ Թօլդարիա է», աւելացրեց նա, յօնքերով ցոյց տալով Ելենային։

Եղանակը հրաշակի էր. Շուրջը ամեն ինչ ծաղկում էր, բղզում էր, երգում. հեռուում փայլում էին լճակների ջրերը, Տօնական պայծառ զգացմունքը յափշտակում էր մարդու հոգին. — Ալս, ինչ լաւ է, ինչ լաւ, անդադար կրկնում էր Աննա Վասիլիկելինան. Ուվար Խվանօվիչը ի նշան հաւանութեան թափ էր տալիս իր զլուխը, իբրև պատասխան այդ պքանչական բացականչութիւններին և մի անգամ նոյն իսկ արտասանեց. — Ի՞նչ ասել կ'ուղի Ելենան և Ինսարօվը մի-մի խօսում էին իրար հետ. Զօնեան երկու մասներով պահում էր լայն զլիսարկի եղերքը, կօկէտ կերպով դուրս էր հանում իր վարդագոյն շրջազգեստի տակից փոքրիկ ոսմերը, որոնց վրայ հագած էր բայց մոխրագոյն կօշիկներ՝ բութ քթերով. նա նայում էր կամ դէպի

Կողքը կամ դէպի ետեւ—իհէ, յանկարծ կիսաձայն բացականչեց Շուրբինը.—չը լինի Զօեա Նիկիտիչնան յետ-յետ է նայում. իկ զնամ նրա մօտ Ելենա Նիկոլաեվնան հիմա ինձ արհամարհում, իսկ քեզ, Անդրէյ Պետրովիչ, յարգում է, որ միւնոյն է դուրս դալիս Է՛ն, զնամ, բաւական է որքան թթուեցի. իսկ քեզ, բարեկամ, խորհուրդ եմ տալիս բուսաբանել. քո զրութեան մէջ դա ամենալաւն է, ինչ կարող ես հնարել, եւ այդ զիտական տեսակէտից էլ օգտակար Մնամ բարով, Շուրբինը վագելով մօտեցաւ Զօեային, թեր կեռացրած տուեց նրան և առաց. «Իրե Hand, Մադամե», Վեր առաւ նրան և առաջ անցաւ, Ելենան կանգ առաւ, իր մօտ կանչեց թերսենեվին և նոյնպէս վերցրեց նրա թեր, բայց շարունակում էր խօսել ինսարօվի հետ; Նա հարցնում էր վերջինից, ինչպէս է նրա լեզուով հովիտների շուշանը, թեկին, կաղնին, լորենին... («Բօլգարիա», մտածեց իսեղճ Անդրէյ Պետրովիչը),

Յանկարծ առջեւից լսուեց մի ճիչ. Ամմենքը բարձրացրին զլութիները: Շուրբինի սիդարամանը թռչում էր դէպի թփերը, շպրտուած լինելով Զօեայի ձեռքով: «Սպասէք, ևս այդ բանը այդպէս չեմ թողնի», բացականչեց Շուրբինը, մտաւ թփի մէջ, գտաւ այնտեղ սիդարամանը և նոր էր վերադարձել Զօեայի մօտ, բայց գեռ չէր կարողացել մօտենալ նրան, երբ էլլ նորից սիդարամանը թռչում էր ճանապարհի վրայով: Զորո-հինգ անգամ կրինուեց այդ բանը: Շուրբինը շարունակ քրքջում էր և սպառնում, իսկ Զօեան միայն կամացուկ ժպտում էր և կատուի նման ծոմուում: Վերջապէս Շուրբինը բռնեց նրա մատները և այնպէս սեղմեց, որ նա ծուաց և յետոյ երկար փչում էր մատներին, այնպէս ցոյց տալով թէ բարկացած է, իսկ Շուրբինը այդ ժամանակ ինչ որ բան էր երգում նրա ականջում: — Զարանցիներ... ջահէլ-ջնուլներ են, ուրախուուրախ նկատեց Աննա Վասիլեվնան Ուվար իվանովիչին:

Նա խաղացրեց մատները:

— Տես ինչպիսին է եղել Զօեա Նիկիտիչնան, ասաց Բերսենեկը Ելենային:

— Իսկ Շուրբինը, պատասխանեց նայ

Մինչ այս մինչ այն՝ ամբողջ խորմը մօտեցաւ հովանուցին, որ յայտնի էր «Միլովիդօվայի հովանոյց» անունով և կանգ առաւ որ զմայլուի, զիտելով Ցարիցինեան լճակների տեսարանը: Այդ լճակները ընկած էին մէկը միւսի ետնից մի քանի վերստարածութեան վրայ: Միապաղաղ անտառները մթին էին տալիս նրանց ետնից:

ՀԱՅ ԴԱՍՏԱՆ
ՔՐԱՉԱՐԱԾ
ԱԿԱԴԵՄԻ